ւորութեան վասն ազատութեան բանտարկելոյն, ապա զերծան 'ի ձեռաց նոցա։

Գրեաց Գարբիէլ վարդապետ յԱքքէ քաղաքէ առ Թէոդորոս՝ թէ վասն ազատութեան Օթմանայ պահանջեն զ500 քսակս դրամոց։ Լատինք ոչ կամեցան մերձենալ յայս գործ մասամբ իւիք։ իսկ Հայք և Յոյնք առաքեցին զթարգմանն յԱքքէ, և նոցա հասեալ անդ՝ խոստացան անթերի հատուցանել զդումարն, և ետուն մուրհակ օրինօք դատարանի ինքնընտիր Իսմայել Փաշայի՝ և հանեալ 'ի բանտէ ըզՇէյխ հաճի Օթման զաֆարճի բերին ընդ ինքեանս յԵրուսաղէմ և առաքեցին 'ի տեղի իւր։ Եւ այս ծանրութիւն բեռին մնաց 'ի վերայ Հայոց և Յունաց։ Թէոդորոս Պատրիարք կողկողանոք գրէ առ ազգայինս 'ի Բիւզանդիոն հասանիլ 'ի Թիկունս, զի չէր մնացեալ յոյս կենդանութեան յերեսաց կեղեքիչ բռնաւորաց։ Նեղութիւնք, տառապանք յափշտակութիւնք և այլ սոյնպիսի տարօրինակ իրք, զորոց երկար գրէ 'ի նամականիս իւր։

Իսկ ուխտաւորքն հասեալ 'ի կողմանս Դամասկոսի՝ ճնաեցան 'ի զօրաց Տէջ կոչեցելոց, և գերի վարեցաւ մանուկ մի 'ի նոցանէ (1804)։

Յաւուրս Թէոդորոս Պատրիարքի Խորենացւոյ յաջորդի Յակոբայ Նալեան, դնեցաւ արդեամբք վանաց Ս. Յակոբայ մեծ տունն 'ի Լաւոդիկէ՝ և կարգեցին զայն հոգեւոր 'ի սկիզս ուխտաւորաց եկելոց ծովային ճանապարհաւ, և յաւելին միարանք և այլք 'ի նոյն՝ քանի մի տունս իրր կալուած հոգեւոր, արդեամբք նոցին պատսպարիլ տեսուչ վարդապետին։ Եւ 'ի սմին ժամանակի Բդեշխն Լաւոդիկեայ բռնացեալ 'ի վերայ հոգեւոր նստոյց զօրս, եւ տեսուչ վարդապետն փախուցեալ 'ի ձեռաց նորա մաղապուրծ զերծաւ յԵրուսաղէմ. փակեցաւ դուռն եկեղեցւոյ, և ժողովուրդք տեղւոյն զրկեցան 'ի հոգեւոր մխիթարութենէ որպէս գրեն դառն գանկատանօք առ Թէոդորոս Պատրիարք, առաջի եղեալ նմա զտարագրիլն իւրեանց 'ի քաղաքէն, զքանդումն եւ զաւերումն չինուածոց հոգեւոր տան 'ի զօրաց անտի։ Իսկ Թէոդորոս Պատրիարք չկարացեալ առնել ինչ առ ժամն առաքեաց 'ի Կոստանդինուպոլիս զՀրովարտակն Սուլթան Մուստաֆայի նորոգել զայն յանուն